

ԲԱԺԱՆՈՐՈՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ,
 ուղիարիտյ համար
 Տարեկան 12 Ձր.
 Վեցամսեայ 6 »
 Արևասահմանի հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 Տր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՍԻՎ ՎՃՋՐԵԼԻ
 Իրանուցման սուրբ սուտօրին
 երեսին համար 40 սանթրիմ
 է. իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սանթրիմ է. երեսին
 աև ի սանթրիմերու համար
 20 ՕՈ զեղր կրղայ :

ՇԱԲԱԹ

Նախկին եւ զրաւ զրկեչ
 Խմբագրութեան հասցեիկ
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿՐՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՎՈՒԹՅԱՆ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
 Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Իրանուցման սուրբ սուտօրին
 (Գ Ի Ն, 20 Ս Ա Ն, Թ Ի Մ)

ՉԸ ՅՈՐԱՆՁԵՆՔ

Ուստատանը պատաստում է.
 ինչպէս երեւում է Տաճկաստանի
 վերջին օրերը, քաղաքական
 կեանքի վերջին վայրկեանները
 մտայնել են: Սուլթան Համիտի
 գերմարդկային ճիգերը իր աէ-
 ռութիւնը կանգուն պահելու, բու-
 լոր խորամանկութիւնները ճօճա-
 լու գիւանագիտական լծակի վրա
 առանց հաւասարակշռութիւնը
 կորցնելու ի գերեւ են դուրս գա-
 լու:

Խալիֆաների լուսապայծառ մա-
 հրկի վրա արգէն վաղուց գտնված
 սեւաւոր բծերը խոշորանում եւ
 հետզհետէ մթնեցնում են ամ-
 բող մահիկը: Պատմութեան ու
 բնութեան օրէնքի համեմատ մա-
 մանակը պալիս է իր անողոր
 վճիռը տալու արեւելքի բունակալ
 պետութեան, որի հիւրը գրուած
 է արեւան շաղախով:

Վերջապէս նշանները ցոյց են
 տալիս որ Տաճկաստանը պատառ
 պատառ պիտի լինի, ինչդիրը
 միայն նրանում է թէ այդ իւրոս
 պատառից ամենամեծ պատառը
 եւրոպական որ պալանի ճանկը
 պէտք է ընկնի:

Բայց մեր ինչ փոյթը. թո՛ղ
 պատառ պատառ լինի, մինչեւ
 կուրծքը. ինչպէս ինքը գարբրով
 արիւնարու վազրի նման պա-
 տառել է զանազան ցեղեր ու ալ-
 գեր: Մենք մտածենք մեր սե-
 փական պատառի վրայ, մեր
 բաժնի վրայ, որ եւրոպական գա-
 զանների պատառին կցված
 չընկնի նրանց անգնդային որ-
 կորը, որոնց ստամոքսները մեզ
 նման փոքրիկ ժողովուրդներ
 մարսելու համար շատ մեծ դի-
 րութիւն ու յարմարութիւն ու-
 նեն:

Տաս սարիէ որ մենք պաշտո-
 նական կուր եւնք միւսմ կարմիր
 սուլթանի գէմ. տաս տարի է որ
 նա մեզինչ տեսակ տեսակ ու
 բողմամբի զոհեր է կլանում:
 Այս տաս տարուայ մէջ մենք մեր

կուով շեշտակի հաստատեցինք
 թուրքիոյ զազանութիւնը. ան-
 շնորքութիւնը եւ անպէտրու-
 թիւնը քաղաքակրթութեան տե-
 սակէտով:

Ոչ մի ժողովրդի ապստամբու-
 թեան ժամանակ թուրքը այնքան
 գարշելի եւ գաղան չէր երեսա-
 ցել որչափ մեր շարժումների ժա-
 մանակ:

Հայկական յեղափոխական շար-
 ժումներն էին որ առիթ տուին
 քաղաքակրթ մարդկութեան շո-
 շափելի վաստակով տեսնելու որ
 սուլթանների պետութեան դո-
 յութիւնը անպատուաբեր մի ա-
 րատ է ժամանակակից մարդկու-
 թեան համար: Աւանա մեր այդ
 ծառայութեան համար մենք
 թուրքիայի պէտք է ստանանք
 մեր բաժինը՝ մեր նախահայրե-
 րից մնացած երկիրը՝ մեր հայ-
 բնիքը:

Բարեյօժար կամքով մեզ չեն
 տայ. մենք չը յօրաջենք, աչ-
 քերս չորս բանանք, լարենք
 մեր ուժերը, որպէս զի գեռ մեծ
 զազանների ճանկը չընկած մեր
 աւանդական սեփականութեան
 տէրը գառնանք: Եթէ ոչ աւելի
 չուտ, գոնէ սպառնացող զազան-
 ների հետ միասին:

ՎԱՐԳՈ

ՊԱՏԱՆԻ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆԻ ՄՐ. ՄԱՀՐ.

Օրերս պատահական նամակէ
 մը կը տեղեկանամ պատանի Ար-
 մենակ Մաղաքեանի եւ իր հասա-
 կակից քրոջ մահուան ախուր
 լուրը:

Այս գուժը այնքան խոր
 յուզից պիտ, որ նոյնիակ ան-
 կարող զգացի նոցա սգակիր ծնո-
 շաց երկտող միջիթարական մը
 ուղղել. անտարակոյս ոչ նուազ
 պիտի յուղէ բոլոր իրենց ներքին
 հոգեկան աշխարհին ծանօթ սըր-
 տերը:

Չի նայելով իր 13—14 տարե-
 կան գեռափթիթ հասակին, Ար-
 մենակը զգացած էր հայրենիքի
 սէրը, ազատութեան ծարաւը ու
 ըջած անոր համար ինչ որ իր
 մանկական հասակէն շատ վեր էր
 ընել:

Հոս իմ նպատակէս բոլորովին
 հեռու է պարզել սյն ամբողջ
 մրրկալից կեանքը որով ապրե-
 ցան Արմենակի անվեհեր ծնողքը
 եւ ուր ինքը, Արմենակը զգաց իր
 հայրենասիրական սրտի առաջին
 թրթռումները:

1895ի ամառն էր որ ճանչցայ
 զինքը, երբ Խուկիւտար ազգա-
 յին դպրոց կը յաճախէր. որքան
 ալ ուսման մասնաւոր սէր ու ըն-
 դունակութիւն ցոյց կուտար,
 այսուամենայնիւ մանկական ձըզ-
 տումները գեռ մեծ տեղ կը գրա-
 տէին իր մէջ. մինչեւ նոյն թուա-
 կանի վերջը Արմենակը զարմա-
 նալի փոփոխութիւն մը կը կրէր՝
 այնպէս որ իր տղայական հա-
 կումներուն իսպառ հրաժեշտ
 տուած՝ այժմ կարծես մեծ մրաք
 մը, բարձր զգացում մը կը գրէր
 զինքը. իր ծանօթները չի կըր-
 նալով թափանցել իր ներքին
 փոփոխութեան պալանիքին կը
 զարմանային անոր լուսկեաց
 բնուորութեանը վրայ: Իր հայրը
 մինչեւ այդ տեսն իր ժամանակը
 մեծ մասամբ նուիրած ըլլալով
 յեղափոխական գործին, լուսա-
 գոյն առիթը ընծայած էր Արմե-
 նակի ազատ զարգացմանը, ա-
 նոր հոգեկան համարձակ թուպ-
 տումին:

Գպրոցի մթնոլորտը շատ նեղ
 ու հեղձուցիչ դառած էր այլեւս
 Արմենակի լայն սրտին, սրը յա-
 ճախ չի կրնալով վերլուծել իր
 զատատեսներուն սոփեստութիւն-
 ները. սեղմումները՝ կը բացա-
 ցանչէր «... անոնք բան մըն ալ
 սորու եցնելիք չունին»:

Եւ որքան արգարացի էր ա-
 նոր այդ բացազանչութիւնը:
 Քանի՞ քանի՞ նորաբողբոջ էակ-
 ներ, իրենց տգէտ ծնողաց ու
 կամ տափակ մտածումներով շա-
 զախտած դաստառներու քմա-
 հաճոյքին լուս գացած են ու կեր-
 թան: Այս բողբոջ կը յիշեմ այն
 շարք մը պատանիները, որոնք
 սրտասուալից աչքերով կը պատ-
 մէին իրենց ծնողաց կամ դասա-
 տուներուն հետ ունեցած կոխ-
 ները այն առթիւ, որ կը հետե-
 ւէին ժամանակակից կեանքի հո-
 սանքին, որ կը ձգտէին ազգային

ազատութեան իտէալին իրագործ-
 մանը իրենց բաժին պարտքը
 կատարել...

Արմենակը մասամբ ազատ այս
 հակազգեցիկ հանդամանքներէն,
 մանաւանդ իր հօրը իրեն առ-
 թած պարագան այնքան մեծ ալ-
 գեցութիւն կրնար ներգործէր
 որ այլեւս գպրոցը իր հոգոյն
 վրայ չէր կրնար աղդել: Այնքը
 ընտանեկան միջավայրին բոլոր
 առաւելութիւններէն մեծապէս
 օգտուելով հեռզհետէ իր մէջ
 կը կազմուէր ազգային յեղափո-
 խականի մը բոլոր անհրաժեշտ
 յատկութիւնները. իր քոյլ առ-
 քայլ զարգացմանը կը միացնէր
 հեռզհետէ անյուզող ու հաս-
 տատակամ բնաւորութիւն մը որ
 զազափարական երիտասարդու-
 թեան յատուկ է:

Արտաքին սիրուն ու կայտառ
 գէմքը կը պարուրէր երկշտա ա-
 մօթխածութիւն մը որով աւելի
 բարձր դատակարարէն պիտի կար-
 ծուէր իրմէն անձանօթներուն,
 քան էնտօֆի մը զաւակը:

Մինչեւ 1896 օգոստոսի ցոյցը
 Արմենակը շատ բան տեսած, շատ
 բան իմացած ու շատ անգամներ
 իր հօր յանձնարարութիւնները
 յաջողութեամբ կատարած ըլլա-
 լով, իր մասին նպաստաւոր գա-
 զափար մը ներշնչած էր, որով
 ոչ մի կասկած չէր մնար իր մի
 քանի յատկութիւններուն առ-
 թիւ ու ինքը այլեւս արժանի էր
 այնքան վստահութեան որքան
 արժանի էր ըստ կարի, փոր-
 ձուած յեղափոխական մը: Գաղտ-
 նապահութիւնը այնքան ծայրա-
 յեղօրէն ըմբռնած էր որ կտոր
 կտոր ընէր չէր կրնար բան մը
 անգամ առնել բերնէն: Աւստի
 ցոյցի օրերուն կարեւոր տեղ մը
 կը գրուէր փոխադրութեան վե-
 բարբեալ գործերու մէջ: Իւս-
 կիւտարէն Բերա եւ անկէ ալ
 ումբի կամ արտճանակի պայու-
 սակներով յաճախ օրը մի քանի
 անգամ անցնել ու վերադառնալ,
 որոնց ծանրութեան տակ ֆիզի-
 քական այնքան ուժ ունէր տո-
 կալու, որքան բարոյական հա-
 մարձակութիւն վտանգներու առ-
 ջեւէն պալարիւն անտարբերու-

Թեամբ մը անցնելու . . . Այս վերջին պարագան անձամբ պիտոսած ըլլալով սքանչացած եմ :

Արմենակը իր ընթացքին մէջ պատրանքի մը խաբէութենէն բռնուած չէր . նա քաջապէս կը զգար իր ըրածի նշանակութիւնը և բոլոր անոր ծանր հետեւութիւնները . . . ու իրական ծառայութիւն մը կը կատարէր որ իրեններուն այնքան գոհունակութիւն կը պատճառէր . ինքը սակայն սրտի ցաւօք կը թոթովէր «ի՛նչ ընեմ որ փոքր եմ, շատ բան չեմ կրնար ընել . . . »

Այս ե՞րբ պիտի մեծնար որ «շատ» բան ընելու կարող ըլլաւ . ի՛նչ հսկայ ծրագրեր կանդրադառնային իր մանկական երեւակայութեան մէջ . . . Վեպ որ մահը շուտ քաղցեց այդ ապագայ յոյսերով լեցուն մտապղկեանքի :

Օգոստոսի ցոյցէն քիչ վերջը իր ծնոյքը կը ձերբակալուին Դատարարի իր հօրեղբոր տունը . ու ինք և իրենները իրենց մեծ մօր հոգատարութեամբ կապաստանին Վառնա , ուր կը մնան մինչև և ընդհանուր ներման , երբ իրենց ծնոյքը շարժարած ու բեկբեկում բանտէն դուրս գալով առաջին անգամ իրենց սիրելի ձաղուկները կը յիշեն : Այս վերջիններս վերադառնալով Պոլիս քանի մը ամիսէն կանցնէին Եգիպտոս ուր այս անցեալ տարուան վերջերը Նեղոսի ափերուն կը յանձնուին այդ երկու մտապղկեանները , թեւեւ Եգիպտոսի

մինակ չի թողելու համար , որուն այնքան կը սիրէր Արմենակին հայրը :

Յայտնելով մեր խորին ցաւակցութիւնը Արմենակի ազնիւ ծնողաց , իրենց թանկագին զաւակաց ախոր մահուան առթիւ , կը փութանք աւելցնելու որ Արմենակը թէև դեռ մանուկ , սակայն անոր յիշատակը այնքան ոգևորիչ միջոց վառ պիտի մնայ մեր սրտին մէջ և պիտի ոգեւորէ մեզ մեր քայլերուն մէջ : Արմենակը անուղղակի մէկ զոհն է թուրք բարբարոս կառավարութեան ու մենք չի պիտի մոռնանք մեր բոլոր կեանքին մէջ անոր Սուրբ վրէժը :

ԷՏ.

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձր դիտմ մինչև ե՞րբ պիտի տեսնեն վէճերն և անհասկացողութիւնք , որ մամուլն ու մտքերն ալ զագրին ասանցմով զարգելու ու իրենց դործակարան և վճարողական քայլն առնեն . թեևս ընթացողն ըսէ թէ ի՛նչպէս կարելի է վէճերն վերջ գրանեն քանի որ մարդս կապրի : Այո՛ , ճիշդ է թէ քանի կեանքը գոյութիւն ունի , պէտք է կուր և անվերջանալի կուր : Բայց ի՛նչ բանք այնպիսի վէճերուն որ պատճառակալ վերջացած են , 1895 թուականէն ասդին , երբ քանի մը իմաստակներ , Կ. Պոլսէն բաժնուեցան , այդ պատճառակալ վէճերը երեւան եկան . ոչ իբր անհասկան քաղաքական կամ զաղափարական կոնիւնք , այլ այնպիսի խնդիրներ որ շարժէ անգամ

Մինչև 1878 թուականին , Մշոյ մէջ 100էն 80 փակուած թիւեր տարբեր , այդ միջոցէն սկսեալ զուրս և կաւ . իրենց ինչ աստիճան զազան ըլլալին յոյց առու . գիւղերէն տասանորդներ առնել սկսան , միմիայն իրենց շահու և առաջնացութեան միջոցներ ատոր մէջ փնտռելով : Ատոնցմէ շատերն որ ապրելու միջոց գտնել էին , քանի տարի առաջ . այժմ իրենց բարբարոսութեամբ հազարաւոր ոսկիի ախրէր դարձան . և այսօր շատ մը գիւղերու հողային կալուածներն իրենց արամադրութեան ներքեւ անցուցին :

Իսկ հայը՝ այդ և այդ տեսակ շատ մը ապօրինի գործողութեանց հանդէպ , գլուխը կախելով իրեն ստրուկ չի լռեց . այլ , նոյն օրինակուրս հանրային ներքեւ , կառավարութեան դիմելով , օրէնքի գործարութիւն պահանջեց . իսկ կառավարութիւնը հայի արդար պահանջին գոհացում տալու փոխարէն , միմիայն կարճ ու կտրուկ քանի մը խօսքէ բաղկացեալ պատասխան կառար թէ՛ «կիտին ուշուշուշ , պիղնէ կախալը , օ՛ քէօյ ալմը , քէօյ ալմը , քէօյ սահիպի օ՛ մըր» : Այս ձեւ ապօրինութիւններ շատ անգամներ կրկնուելով հայուն մղեցին այն ուղիի մէջը , որ 500 տարիներէ ի վեր կորսնցուցած էր , այդ տեսակ բարբարոս կառավարութեան մը անտանելի լուծին ներքեւ . ամենահաւատարմարար ամէն տեսակ շարժիչներ կրելով :

Ինչպէս միւլթիլինգութեան նմանապէս ալ հարկահաւաքութեան , աւազակութեան և գողութեան դէմ ե-

անուն ալ , ու մինչև ցարդ և ոչ մի եզրակացութեան կամ արդիւնքի հասնան : Այդ իմաստակներու ալ ձազանքը հասու մինչև և Ամերիկա . Նիւ-Եօրթ «Ձայն Հայրենեաց» անունով թերթ մը կը հրատարակէր , իսկ այժմ , Ուսթըր : Թող մի գրտակից կամ զտոգայեալ երիտասարդ , այդ թերթին թիւերը ուշիմ կերպով աչքէ անցունէ . հոն պիտի գտնէ . . . ոչինչ , այլ միայն ստամոքսի ցաւ պատճառով բաներ : Ե. Պ. կարծիքս ունի ձայն-ստամոքսի անունը ալ , բայց այժմ այդ անունը թող մնայ , քանի որ Պ. Լէօն ձայն-կղերաց անուն տուր , այսօր իրականացաւ :

Այսօր այն թերթը կը հրատարակուի երկու կղերներու հսկողութեան տակ , և կղերի մը օտկան ըլլալէ վաստ ուրիշ բանի երբէք չէ կարող ծառայել : Ասոր իբր փաստ , Վ. Շահէնի , «գայթակղութեան քարը» վերնագրով յղուածը կրնայ ըլլալ , որով Պ. Վ. Շահէնի կողմէ պիտի թէ ո՞վ է գայթակղութեան պատճառը , որ այսօր երկու դաւանութեան պատկանող իրարու հայտ չեն նայիր : Բնական է որ հոս չը պիտի յիշուի թէ ո՞վ է պատճառը , ճի՛ ինքն է ատոր հսկողն և խմբագիրը . որովհետև իրենց սպէս և իմաստակ գրչովն ու գործքովը ցոյց կուտան , որ իրենք են գայթակղութեան պատճառը և ուրիշ ոչ ոք : Ո՞վ է Պ. Շահէնի , ձեզ կը հարցունենք , որ ազգային բարեխրական գործերուն պատճառէն ընտրուելու հակառակ կը կենայ , երբ կը նորոգին ազատութիւն և ոչ նախորդական անձինք . ո՞վ է որ ազգային ազատ յարանին մէջ բողոքականի մը ձայն ունենալը կարգիլէ երբ այդ լատարներ Ուսթըրի ամբողջ հայութեան կը վերաբերի : Եւ հոս է որ ձեր պատասխանը տոսած չը լինիք : Բնական է որ «Հայրեն-

իւր» թերթը չը պիտի պատասխանէ այդպիսի բաներուն , երբ այսպիսի խնդիրներ օրուան խնդիրներ ընել չէ կարելի , և նշանակութիւն անգամ չունի . այսպիսի հարցերով միայն կարելի է զբաղիլ ձեզի , և յարմար ալ է , և մենք արդէն կղերներէն որ եւ է օգուտ չենք ակնկալեր , ո՛րք մնաց անոնց քծնող , և անոնց հացով ապրող անձերն :

Ուրախ պիտի լինի զարգ եթէ դուք միանալով Չօպանանին և Սըրգեանին հետ սուլթանին հաւատարիմ ծառանելը լինիք . այն ասան կարող էք ալ կուշա հայ ուսուի , Երբ Ա. Արամեանին , ու Արտըր-Արթըրի պէս գիւղացիներուն յիշատակութիւնը կարգիլէք : Երբ ժողովուրդը կողմէ անոնց համար պատարագ և հոգեհանգիստ կատարել , իսկ դուք չէք ուղեր . ուրեմն դուք ի՛նչ ատարներովն ունիք սուլթանի Համիտէն , երբ նա հայ հերոսը կը զլխատէ . իսկ դուք յիշատակութիւն կատարել չէք ուրիշ : Պ. Շահէնի , Սարահան և ընկ . թէ՛ դուք հակառակ էք , ինչպէս սեւեռոյս Հայ Յիդ : Դաշնակցութեան գօմիթիւն հրապարակային ժողովին մէջ ցոյց տուիք , և միանգամայն ձեր կատարեալ տգէտ և խառնակիչ ըլլալը ցոյց ապրով ժողովն դուրս ելաք :

Դարձեալ ժողովուրդին մեծ մասը , որք գիտակից են իրենց բրածններն , երբէք գործել պիտի չը զազարին : «Ինչպէս դուք ալ խօստովանած էիք թէ ասանք բոլորն ալ զարգացած երիտասարդներ են , ասոնց գիտաբանի անկարելի » :

Սիրելի ընթացող , ահա այս է որ կըսուի վէճեր և անհասկացողութիւններ . յոտոնց վերջ մը սալու միջոցը այս է իմ կարծիքով , որ երբէք այդպիսի խեղճուկ և տղա անձերուն ոչ պատասխանել և ոչ ալ կարեւորութիւն տալու է : Մենք առանց մեր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՈՅ ԱՇԽՐՂԻ ԵՆՅԲԵՐ , ՊԻՏԵՐԱՉՄԷՆ ՅԵՏԱՅ , ՈՒ ՅԵՂԱՓՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՄՍՈՒՄ

Ե.

Դատարաններու մէջ հայոց կողմանէ եղած բողոքներու անլսելի մնալը .

Վերոյիշեալ Գ. յօդուածներէ բաղկացեալ քակիչ ու քանպիչ ծրագրի գոյութեան պահպանումը . սոյն վերջինի հովանաւորութեան ներքեւ կարող էր շունչ առնելով առաջ կրթալ . ատոր համար Սրբի փաշան իբրև գործածական կարեւորագոյն կանոններէն մին գատարաններու մէջ մըտցուց , ի պահանջել հարկին գործադրել աւելով :

Այդ միջոցներուն հայ ժողովուրդը որքան որ իրենց գիւղերու մէջ ճընչուէր ու հարստահարուէր , առանց վարանելու կառավարութեան կը վազէր , իր ցաւերու միակ զարման այնանց որոնելու . կարծելով թէ՛ կառավարութեան ուղղութիւն ինչ որ առաջ էր , նոյնն էր մնացած իր բողոքած ժամանակին ալ . և երբէք մտքէն չէր անցունէր թէ՛ այդ պազանային անխիղճ հրամանները պատարաններէն ծագում առնելով դուրս էին եկած իրենց ստորագրասեւեռներու ձեռամբ գործարարութիւն :

զած բողոքները չէր լսուեր . շատ անգամներ ալ բողոքող հայը կը գատապարտուէր տուգանքի և պատժոյ , իբրև յանցաւոր . միմիայն թէ այն ժամանակ կը լսուէր , եթէ բողոքողն քիչ շատ նիւթական կարողութեան տէր եղած ըլլար . կողմ ու պատիր խօսքերով կը յուսադուէր . գատը ի նպատ իրեն վճուուելու . Եւ այսպէս ամիսներով տարիներով կը քաշքշէին . կարծանքը կորուցու համար , մինչև որ բողոքողը խելքի գարտանակելով թէ իր պահանջածին կրկնապատիկ կամ եռապատիկ ծախսուած էր . կրկին իր գատն այն տեղն էր , ուր որ էր առաջ . այլևս խելքի գալով հարկադրուած ևս կը քաշուէր , գատը երեսի վրայ ձգելով :

Դատարաններու մէջ հայոց նկատմամբ եղած անիրաւութիւններն և բողոքներու անլսելի մնալն այնքան անխիղճաբար առաջ տարին որ , այլ ևս հայը զուրեցաւ . և մինչև անգամ հարկերին մէկը բուն իսկ չէր ուղեր այդ կործանիչ շինութեանց անգամ մօտենալ . բողոքատմար գատարաններու անիրաւութեանց դուրսէն եղած ճնշողութիւններն ու հարստահարութիւններ փառք համարելով :

Ահա ինչպէս որ 1880 թուականին մէկ կարեւոր դէպք մը պատահեցաւ . Հաղոյ քաղաքի գատարանի մէջ , քերտին մէկը հայ մը սպաննելով , հայուն եղբարը գատարանի դիմելով բողոքեց . և արեւնի փոխարէն արեւնի պահանջեց . այդ արդարացի բողոքը , փոխանակ նկատողութեան առնելու , ընդհակառակն պատասխան

ստացաւ . դատարանն թէ՛ «մենք միւլթիման քերտ մը չենք կրնար գատապարտել մէկ անհաւատ հայու մը համար . մեր չէրի օրէնքը չի թոյլատրէր . չէրի օրինաց առջև հինգ անհաւատ մէկ հաւատացեալի չափ նշանակութիւն ունի . հետեւաբար երբ քերտը չորս հեղ ալ սպաննէ , այն ժամանակ ըստ օրինի կըրնամք դատապարտել» : Քերտը մէկը սպաննելով խղճահարուած է միւսն ևս սպաննել իսկ գատարանը պարզապէս թոյլտուութիւն կընէ սպաննելու . չէ թէ մէկը , այլ շատ : Այս զազանային անխիղճ յարարարութիւններու վրայ հայ ժողովրդեան յոյսերը բոլորովին վերջաւ գատարաններու վրայէն , այլ անպայման իր գոյութեան պահպանելու համար , «ակն ընդ ակն ևս առամ ընդ ատաման» ընդունելով :

Ինու-թըքական պաթերազմէն յետոյ կառավարութեան հայաշինչ բրոնած քաղաքականութեան մասին , վեր ի վերոյ տեսութիւն մը բնուով , պարզեցի՛ ցոյց չուալով թէ՛ 1878-1889 թուական ի՛նչ անլսելի անցեալ Մշոյ աշխարհի գլխէն անցան , և ինչ կորստաբեր հեռքեր թողուցին մասնակի հարստահարութիւններ և մարդապանութիւններ ժամանակին թողուով :

Այժմ ալ վեր ի վերոյ տեսութիւն մը պիտի ընեմ հայ ժողովրդեան վրայ թէ՛ այդ կործանարար բնիկացի դէմ ի՛նչ միջոցներ ձեռք առաւ . և ինչ յեղաշրջումներ առաջ բերաւ , այն կարեւոր դէպքերով , որ մինչև Բ. Դուռը ցնցեց :

ՍՄԿՍՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆԻ (Շարունակելի)

նպատակէն չեղելու շարունակելու ենք. քաջարար կուտելով մեր ներքին ու արտաքին թշնամիներու հետեւ այն ատեն է որ Սերոբ-Աղբիւրին եւ ընկ. յիշատակը անմոռաց պահած կ'ըլլանք:

Կուգամ նաև «Շարժում» ընթերցողներուն ուրախալի լուր մը տալ. որ յաւիտ մեզի վերագրելի է. որ ինչ բացասութեամբ Ամբիկայի հայ գաղութը կուեննայ. այն է Պ. Ա. Լեւոնեանի նման զարգացեալ եւ ազատամիտ երիտասարդ մը ընդունելն յիս. որ քիչ ժամանակի մէջ ժողովուրդին սիրելի դասունակն դատ. կը սերմանէ իրական յեղափոխութիւն եւ գիտակցութեան հոգին. իր լուրջ եւ շրջահայեաց ընթացքով:

Երանի թէ այսպիսի անձնաւորութիւններ ամէն տեղ եւ միշտ գրաւորէին. չուտով սպիտութեան ճիւրաններէն ազատուած պիտի լինինք:

է Ան

Ուսմբ. 25 Փետրուար

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

10 ՐԷՆՍ, 24 Փետր.

«Ազգային» Հնչակեաններու հրատարակչին ժողովին կը վերադառնամ սենեակս ու ինքզինքըս կը գտնեմ գրասեղանիս առջեւ որ հարկորդեմ պատրուած լինէրս. նախ ըսեմ որ Երկու հարիւրի չափ բազմութիւն մը կար, որոնք ամենախոստիւնէն Պ. Քիթեան եւ Վ. Շահէնի. ժողովը բացուեցաւ տէրունական աղօթքներով. ատենապետութեամբ պատուելի Ս. Յ. ի որ իր աթոռին պարտականութիւնը կատարեց. այս անգամ «ուժերուն չէր խնայեր» ինչ պիտի ըլլայ ազգին վիճակը ըսողներուն քթին բերնին լաւ տուաւ եւ ըսաւ պէտք է այսպէս ըսենք «ինչ պիտի ընենք որ ազգին վիճակը բարելուենք»: Այնպէս ըսողները ծոյլեր են լիճմպելներ են. Աստուած պիտի օգնէ իրեն. նստելու աղօթելու ժամանակ չէ սակաւցունելու ենք ժամ ու պատարագ սաղմունքներ ու ալիւրիքներ. «չեզոք կուսակցութեան» ինչ որ պէտք էր ըսաւ. լաւք թէ «ազգային աղքատամբութեան» մը վրայ կը խօսէր. անոր կը կարծուինք. Ես ալ կը փախաւ իմ պատուելի եւ միանգամայն ցանկացողներ շատ ու շատ են «եթէ խօսքով փիլաֆ եփի ծոյլու չափ ալ իւր ինձմէն» կըսէ հայկական առածը. բայց առաջի սանդուխին վրայ մինչեւ որ գործնական օտք չի գնես չես կրնար մինչեւ վերի գլուխը մէկիմայ ցանկել. քիչ հանրաժանութիւն մը չունի իր մէջ որ կարող ըլլանք հոճակը սեղմելով մէկանց օտքի կանգնեցունել գործի սկսելու. նոյնպէս ալ արտաստեմութիւն մը երկնքին կաշիքնու պատրաստ Հայաստան շարժի իմնէ. «մարդ» ըսած կակը պիտի կատարէ այդ գործողութիւնը այնտեղ. ուր ստիճանին սուրը շտուկի մը կը կարօտի միայն. հասկցա՞ր հիմա.

իսկ ինչ կուզէիր այն «երեք սիւնքէն» որ քաջելով ու քաջկրօնելով մինչեւ Ամբիկայ բերելու ու «ազգային գանձանակ» մը շինեցիր» եւ ժողովրդի վիճաբանական հոյն ալ որ պիտի ըլլար (յոյս ունիմ թէ պիտի վերսկսինք նորէն): Ստրածեանով զլուխ հանեցէք ալ կը թելադրէիր եւ այսպէսով ամբողջ Ամբիկան ձեզ կը հետեւի. ինչ ա՞ն ալ ձեր թելէն կը շալէ հը. ստոր այսչափ: Հրատարակեալ Պ. Քիթեան, առ ալ իր սովորական շարժումներով, վեր վարով, թեւերով ու օտքերով սկսեց մէյ մը ցած ձայնով, մէյ մը բարձր. վերջապէս խօսեցաւ. ինչ ինչ սէն նամակ մը եկած է մեզ որ շատ զէջ կը նկարագրեն թուրքերու կողմէն եղած ստակալի վայրագութիւնները. շատ մը անակներով բաներ խօսեցաւ որ ընկալցի պատեանն անգամ չէր լինունէր. չորս տարի առաջ ինչ որ կը խօսէր այսօր կրկնեց— «սխալեցանք, խաբուեցանք. հիմակ փոռձառու եղանք, լուրջ վերջապէս փորձառութիւնը մեզ շատ բան սորվեցուց իսկ 1896ին մենք երբոր վերակազմուեցանք ընտանիքէ մը բաժնու իւրով էր. մենք շատինք եւ ոչինչ. նոր ծընեցանք ու նոր պիտի սկսէինք գործը. ու ան ժամանակները ինչ ազնուայալի օրեր էին. մինչեւ որ անցուցինք, ինչ քաջցինք. «գիտէք որ Գրիգորի մտորին մէջ ծնաւ ախոռ մը էր հոն, մենք այնչափ տագնապալից օրերուն մէջ գարձեալ մեր գաղափարին վրայ հաստատ կեցանք. իսկ իմ 1897 Շուկը. 7 ի կեղծութիւն գրած նամակս կազմակերպութեան մը ձեռք անցած է ու ան մեզ կը ծաղրէ, այն նամակով. այդ բոլորովին կը խնդրով իրեն Պ. Քիթեան, Կաշակցուցութիւնը ոչ միայն կը ծաղրէ այլ զըւանք կը արտաբայեց զէպի ճոճունն վերակազմեալ շատ րազանը. ալ կը խոսէր միամիտներու բանակի վրայ որ «ազգային մեծամեծ շահերու պաշտպանութիւն կը սպասէ քեզ եւ յու նման թող փչող «առաջնորդներն» հանդիպա՞ր հիմա Պ. Քիթեան. ինչ որ է չեմ ուզեր երկար գրել «Շարժում» ընթերցողս զըւանք մը բերելու, տեսնել թէ ունիք մը բերելու, տեսնել թէ ան Վ. Շահէնին ինչ կը փչէ. Հրատարակեալ «տեար» Շահէնին սկսեց Հայաստանի սակէն, Պարսկաստանի մէջէն մինչեւ Ռուսաստան հասաւ. առաջ իր կարողութեան շարժով ցոյց տուաւ իր գողարիկ գաղափարները. կարճ պիտի կապեմ ըսի, եկաւ մինչեւ Այաշկերտի վերջին զէպքին վրայ ծանրացաւ. մենք ալ ըսաւ «եթէ զինակորթ թիւն չենք բրբեր, զէթ քոզէն անցած ենք, Կաշակցութեան գործունէութեան շատ թէ քիչ անպակ ենք. ես կը քննադատեմ զանոնք որովհետեւ որը-

տիս վրայ վերք են թողուցած. մենք ալ հայն ու հայրենիքը սիրող ենք» հարիւր հոգիով զինակիր խումբ շըլար. ըլլայ-ըլլայ 20. Աս ալ ուզեց այս ուղղութեամբ ժողովրդի մտքին ասրեր թափ մը տալ. թող թուրքը իր ծրագիրը գործադրէ, իսկ դուք ալ ձեր այդ կարգի Պրոպագանդայէն ետ մի կենար. իմո՞յ Կաշակցութիւնն ձեզ կարեւորութիւն շտալով իր գծած ուղին շարունակէ, իսկ դուք չանացէք անոր յեղափոխական քայլերը վնասակար համարել ու տարբեր կերպով ժողովրդին ներկայացունել: Ժողովուրդը շատ լաւ համոզուած է որ ձեր ըրած Պրոպագանդան արիչ բան չէ եթէ ոչ չար նախանձ ու սեւ կիրք, բացառութիւնները յարգելի են. ուր կայ գործ հոն կայ յառաջդիմութիւն. ուր կայ կռիւ, հոն կայ յաղթութիւն, ինձ կերեւի թէ ազգային Հնչակեաններու ուրուականներն են գործողը. երկրին մէջ ալ չի խաբուիր ժողովուրդը:

ԵՊՏԱԿ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարգալով «Շարժում» լրագրոյց 209 թիւին մէջ «Ախպար» ստորագրութեամբ Սօֆիայի նամակն որ իմ անձիս զէմ ստորին զրպարտութիւն մըն է. կը խնդրեմ ձեր լրագրին մատակայ թիւերէն միտն մէջ հաճիք հրատարակել համառօտ պատասխանս:

Սօֆիայի մէջ միակ քէմախիթ թիւթիւնն սարսփն ըլլալով, տեղս գտնուող բոլոր հայրենակիցներուս որք մեծաւ մասամբ ազգականներս են, չեմ խնայած նիւթական թէ բարոյական ամէն աջակցութիւն որք կարողութեանս սահմանին մէջ են. եւ վաշխտուութիւնը. որք իրմ աւելի եւ կատեմ. «Ախպար» ինձ վերադրելով կուզէ անձնական կիրք յաղկցնել. առանց ունենալու մէկ հատիկ մասս մը որով սքողած բոլոր իր ստույթները եւ զրպարտութիւնը:

Արհեստս ոչ թէ վաշխտուութիւն այլ գրաժողովութիւն է. որ կարծեմ վաճառականութեան մէջ ճանչցուած ամենէն պարկեշտ զրպարտութիւնն մին է:

Կը հասկնամ թէ վաշխտուները Հապատանի մէջ ինչ աւեր ու աւերութիւն չեն գործեր ազգատ հայ զիւղացի գլխուն. բայց չեմ կրնար ըմբռնել թէ. Սօֆիայի նման լուսաւորեալ ազատ քաղաք մը ուր օրէնքը կիշխէ եւ ուր պանդաներ եւ սեղանաւորական հաստատութիւններ բազմաթիւ են. եւ ստորին մինչեւ իսկ 7 ը/0 առկոսով փոխառուութիւն կրնեն. զիմի սակիւղէ եւ քարսիրատ վաշխտուներու (եթէ կան) եւ ամբար 15—20ով գրած անեկ:

Փոշխալի վրայ գործ եւ սովորով փոխառութիւն իմ գործառնութիւններս գուրս են. զի ինչպէս ըսի պարզ գրաժողով մը եմ: Եթէ կը նախանձիք այդ ստակալը ձեզ կը թողւմ, պարտն Ախպարս: Եւ ձեզ կը վերագործնեմ այն կոչաւ ու կուրս ամականները գորս գործածած էք եւ որոնք արպարեւ ձեր նկարագիրը կը կազմեն:

Ս. ԿՐՏԻՉԵԱՆ

Սօֆիա, 7 Մարտ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԲ

Ի յիշատակ նորոգ հանգուցեալ Աւետիս Էֆէնի Պարոնեանի հոգեոյն. ազնուուհի այրի տիկին Թէնուֆ Ա. Պարոնեան. վատնայի «Ազգայն» կրթարանին հարիւր Քրանք նուրբից:

Կրթարանի Տնօրէնութիւնը, ի զիմաց ազգատ աստուղուհեաց. կը փութայ հրատարակաւ իր շնորհակալութիւնն յայտնել առ ազնուուհի նորապատ տիկինին:

Պ. ՆԻՅԻՐՃԵԱՆ

Վատնա, 8 Մարտ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Շարժում» 210 թիւին մէջ խմբագրութեան կողմէ իմ մասին եղած «նամակատու փոխին վերջին պարբերութիւնը ժողովուրդին մէջ թիւր մեկնութեանց տեղի էր արտի:

Արդ իսկի պարտքս կատարած ըլլալու համար հրատարակաւ կը յայտնեմ թէ Պ. քաղաքի խաչագողութեան մէջ թուրքի մատ առնայ իմ կարծիքով. ոչ թէ իրարանցումին մէջ. Այս է յայտնած կարծիքս, վստահ եմ որ պատույն ստեանի մը առաջ պիտի հաստատուի:

Զարեհ Ս. Պեշիբեան

Վատնա, 9 Մարտ

ԵԱԶՍԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Քատութեան օրեր են. ուր մենք եւ համարատութեան: Երեկ «Անահիտ» խմբագրին էր, այսօր էլ Վատնայի մեր Եազմածին. որչափ ճիշդ թափեցինք որ այդ պարտին հետ շը խօսենք, բայց չի լինում էլի, իր էջը առաջ քշելով համար ամէն միջոցի գիմում է, մանաւանդ սուտին:

Չը գիտենք ինչու, թուրքաց այդ կիտատ օրէնագէտը եթէ Տաճկաստանի մէջ լրաւաբանութիւն եւ օրէնք գոյութիւն ունի. չափազանց յուզված կերպով իր «Հուլիոս» թերթի հրատարակութեան պատմութիւնը է անում. առանց յայտարարելու որ «Հուլիոս» ծրագրին էր. Սահմանադրութիւն պահանջելով թուրքիոյ համար. մի բան որ արմատականապէս հակառակ է վստահար է հայութեան ազգային ձեռքատմանը: Պարտը իր «Հուլիոս» թերթի ներկայումս մէջ էր իբր «Փոն» թերթի եւ մեր լուսնին համեմատ, իր արքայիցա ժամանակ այդ թերթը կուսակցութիւնից գրաժողովան օգնութիւն է ստացել:

Քեանց այդ իր տեսական սքանչելի պարտը, իր զիւղումները թիւրքաց վերջը ինքզինքը կուտի եւ եազմայի վաճառական է հռչակում. կարծես հասկացնելով որ իր գրամատէր վաճառական գաղափարի է սկսել ծառայել այն

ինչ ոչ թէ վաճառական՝ այլ լոկ «չարչի» է եղել, իսկ «Իրաւունք» ի խմբագիր միայն այս վերջին մասնակցերը. որովհետեւ առաջ Պ. Պօնճուզեանն էր կառավարում թերթը:

Յետոյ մեր ճարտասան քառուղի ուղում է հաւատացնել թէ «ճարժում» ի խմբագիրը ուղեցել է կաշառել իրեն. դրա պէտքը չը կար. որովհետեւ «ճարժում» ի խմբագիրը իր ուղածը առանց կաշառքի տպել էր տալիս «Իրաւունք» ի մէջ. իբր փաստ՝ այն էր «Բանու» թեան զոհերը՝ ապագրվում էին առաստուղն ախարայող ուսմանը ի հետ:

Իսկ Ամերիկայից ոչ թէ կաշառք էին խոստացել այլ առաջարկել էին թուրքերէնը վերցընել, որի պատճառով փաստ Ամերիկայից եկող բաժանորդները կը վճարեն, եթէ միայն երկու սինակ դրուէր ամերիկացիներ ի տրամագրութեան տակ. եւ պարոն խմբագիրը ոչ թէ մերժեց. այլ պայմաններ էր մշակում և յաջողութիւն չունեցաւ:

«ճարժում»ը մեր խմբագիրը չհրատարակեց, այլ «Իրաւունք» ի մէջ մշտապէս աշխատող երիտասարդ և աւելի խելացի ուսմանը տեսնելով որ չարչին իրենց ցէնզորն է որոշում են աւելի մի ազատ թերթ հիմնել, և դիմում են մեր խմբագրին բարոյապէս աջակցելու և այդ աջակցութիւնը գտնում են: Արջն է որ «ճարժում»ը անցնում է ներկայ խմբագրի ձեռքը:

Թէ «Հուզուզ» ի նշանակով էր հրատարակվում այդ գրեան իրեն հետ մօտիկ գործ ունեցողները: Առտի լաւ կը լինի որ եաղմածին իր բացատրութիւնը նրանց առջ:

Եաղմածին՝ անուղղամտութիւնը իրեն երկրորդ արհեստն է շինել. անցեալները իր գոված ուսուցիչներէ մէկը ամենացած գողութեան մէջ բռնվեց, մենք սպասեցինք որ պարոնը յայտարարէր այդ գողութիւնը և լռեց:

Սուրին և Տօթ. Շաքարեան իրենք ուսուցիչ լինելով հանդերձ կեղծ ստորագրութեամբ ինքզինքնին գովում էին. Շաքարեան նոյն իսկ պարծենում էր Պ. Յ. Փափազեանի մօտ, և եաղմածին հրատարակով ուրանում էր դրանց իրենց վրայ գովասանքներ գրելը:

Սրանից մէկ քանի ամիս առաջ Ռուսաստանից մէկ պարոն մեր բանակցիները եաղմածին միջոցաւ մեզ ուղարկեց և եաղմածին այդ գրամը իրեն սեփականացրեց առարկելով թէ՛ այն մարդը իրեն գրամ է պարտք եղել: Եւ մենք ստիպուած եղանք ոպասել, մինչեւ որ «Իրաւունք» ի համար մեր հասցէին գրամ գալ և վար գնենք:

Ինչպէս էլ եղաւ. Ահա ձեզ եաղմածին իր ամբողջութեամբ. ո՞վքեր են դրա

գործ իքները՝ Արմէն Շիրտան որին մի քանի ամիս առաջ ամենազատ մարդի տեղ էր ընդունում, և իր լրագրում հարուածում. մասնագործ Մարտիտ գեւ 90 թուականից յայտնի. Երուանդ Թուղլաճեան որ մէկ անգամ արգէն Դաշնակցութեան օրգանում հրատարակվեց իբր զէնքի յախշտակիչ: Եւ այսօր զէնքի զեղծման համար իբր ազգասէր և բորբոքուող եաղմածին և իր շրջապատողների ամենամօտիկ մարդն է: Տաճկական բարոյականութիւն: Հռչակաւոր ձգնաւորեան, խոհարար Արթիւն, այն միւս աղտոտները չենք յիշում:

Ահա ձեզ հայերէն «Հուզուզ» ի զեկավարը և իր արբանեակները որոնք ուղում են ազդին ծառայութիւն մատուցանել:

Տաճկական պաշտօնական լրտես Պ. Քալիշի «Արտաշ» ձգնաւորեան հասկանալու համար իր ինչ ըլլալը թող իր եաղմածին բարեկամի հետ միասին գիմէ Մակեդոնական Բարձրագոյն կոմիտէին ուր կը գտնուի Քալիշի տեղեկագրութիւնները: (*)

Պ. ԱՌԱՔԷԼ ԱԼԹՐԵԱՐՄԱՔԵԱՆԻ:

Պ. դուք չէիք որ ձեզի յայտնի Յ. Կ. Ճ. ի և իմ առջեւ խոստովանեցաք թէ տեղեկութիւն ունէիք 28 մտաւեկներու մասին, բայց քանակութիւնը հաստատապէս չի գիտնալիս դ համար մտանաւոր նամակ մը գրած էիք Յ. Մ. ին ի Ռուսաստան և պէտք եղած տեղեկութիւնը առնելով ազատել աշխատած էիք. բայց չէիք կրցած:

Յետոյ դուք չէիք ոչ յայտնեցիք թէ Յ. Մ. անձամբ փախցնելէ վերջը ջանք չէիք խնայած և անոր ընտանիքը ճամբու գնել: Բան մը որ ձեզի շտա կը մօտեցընէ բուն խաչազողին հետ:

Այսքանը յայտարարելէ վերջ շտա բնական է որ դուք պիտի գիտնաք բուն խաչազողները, ուստի փոխանակ ատեանները կաղմելու, որոնք չեն կրնար ոչ մի ազդեցութիւն ունենալ կաղմակերպութեան մը վրայ, լաւ կընէք հրատարակաւ յայտարարէք այն գէմբերը, որոնց մասին ամիս մը առաջ խորխտաբար խօսելով կուզէիք ձեր անմեղ զոհ մը ըլլալը հաստատել:

ՅԱԿՈՒՅ ԱՂԱՄԵԱՆ

(*) Այս մանրամասնութիւնները պարզելէ յետոյ համոզուած ենք թէ մեր ընթերցողները հասկցան թէ ի՞նչ է եաղմածին, և իր «Իրաւունք» ի թերթը: Առտի կը խնդրենք մեր բոլոր աշխատակիցներէն և թղթակիցներէն որ երբեք եաղմածին և իր թերթի մասին ոչինչ չը գրեն, որովհետեւ անպայման կերպով չի պիտի սպողորուին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտ 10ին Պօլսէն կը հեռագրեն թէ Բ. Դրան մօտիկ շրջանակներու մէջ կը հաւատացնեն թէ Հաֆեզը փաշան իր պաշտօնէն արձակուած չէ այլ հրախրուած է տեղեկութիւն տալու Եւոկլիպի վիճակի մասին: Ի սոյնիսկ Լարիլի է որ նորէն իր պաշտօնատեղին վերադառնայ:

Սուրբանին վերջին ջանքերն ալ Մահմուտ փաշան իր զաւակներովը միասին վերագարձնելու համար զուր անցած են:

Լօնտօնի թերթերուն Գրօնտատէն կը հեռագրեն թէ մարտ 4ին նախագահ Քրիւկէր ճառով մը յորդորած է պօէրները հաստատուն թաղապատութեան կառուցարանակերպ. որովհետեւ Անգլիացիներու Պիլմֆօնտէն առնելը իրենց անկախութեանը չի սպառնար:

Նոյն սոգով ճառած է նաև նախագահ Շաէյն և յորդորած է որ Լօրտ Բօպէրտօի, զէնքեր յանձնելու համար, շրջաբերականին կարեւորութիւն չի տրուի:

Երկու նախագահներու ճառերն ալ մեծ սգեւորութեամբ ընդունուած են:

Ժընէվի մէջ մակեդոնացի յեղափոխականները «Լէֆօր», անունով նոր թերթ մը սկսած են հրատարակել Ֆրանսերէն լեզուաւ:

Սրտանց յաջողութիւն կը մտղթենք մեր մակեդոնացի եղբայրներուն:

Պօլսոյ մէջ լուր կը պարտի թէ շուտով Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ համաձայնութիւն մը պիտի կայանայ, որով թուրքիան կը պարտաւորուի Ռուսիոյ սահմանակից նահանգներու մէջ իր դրամով և ինքը շահագործելու նպատակով երկաթուղիի գծեր շինել:

Պիլմֆօնտէն կը հաղորդեն որ 400 օրանմցի պօէրներ զէնքերը յանձնած են անգղիացիներուն և գացած իրենց տուները:

Քանի մը գերմանացի դրամատէրներ իրաւունք ստացած են ճակնտեղ մշակելու և շաքարի գործարան մը հիմնելու Լիւլէ Պուրկազ:

Արիւն զբամատէրներու խումբ մըն ալ արտօնութիւն ստացած է Ատարաղարի մէջ փայտեղէն կըտրելու մեծ գործարան մը բանալ: Մինչդեռ թուրք կառավարութիւնը ճիգեր կը թափէ օտար փօտաներէն ազատելու համար, Պօլսոյ գերմանական փօտայի վարչութիւնը նոր մասնակից մը բացած է ուղղակի Բերայի մէջտեղը. Գալաթա սէրայի մօտերը:

Երբեք քէօքի մէջ համոզուելով թէ Ռուսիան Թուրքիոյ մէջ երկաթուղի շինել կուզէ քաղա-

քական նպատակներով, իսկ գերմանական վաճառականական, որոշած են միւս գիծերու շինութեան տրտօնութիւնն ալ պարտանայիներուն առջ, թէեւ ուսմանը հետ սկզբունքով համաձայնած են:

Թ ՏՐՈՒՆ «ԱՆԻԹՐԱՆ»

«Անէլլոն» հայ դերասանական խումբը, այս գիշեր, Մարտ 11, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ «Թաւար զատէ կամ Պին պիւր տիրէք» Կ. Պօլսոյ մէջ գէպ մը 1800ին, տրամագովէտի 6 արար:

Միջնարարներու ատեն՝ ուս Պ. Վլատիմիրօֆի կողմէ Տուէթթօներ:

Վաղը կիրակի գիշեր, Մարտ 12 պիտի ներկայացնէ «Գուաճան քահանայ մը կամ 5000 Քրանքի մատնութիւն» տրամագովէտի 6 արար:

Միջնարարներու ատեն՝ ուս Պ. Վլատիմիրօֆի կողմէ Տուէթթօներ:

ՆՈՐ ԲԱՔՈՒԱՆՆ ԿԱՃԱՌԱՍՏՈՒՆ

Ա. ԳՐԻՈՒՆՕՅ

Վառնա (Մուսաղլա)

Կը վաճառուի բացի զանազան զրգրացական պիտուքներէ, ընտիր թէյ, առաջնակարգ սուրճ, նաճակաղորչ և տնային մանր պիտուքներ նաև Շարժում:

Ա. Զ. Գ.

Տ. Վահան Մամիկոնեանի «Կ. Պօլսո» ճաշարանը փոխադրուած է հանրաճանօթ «Օթէլ Պօլսո», ի Ռուսչուք. ուր ըստ առաջնոյն կը պատրաստուին հայկական համեղ կերակուրներ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇՈՒԹՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցէտոմս, նամակաղբուլ, հարսանեկան հրատարակիչ, մահազգ:

Գիտները յոյժ գիւրամատչելի. Արիւն քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԸ ԿԱՆԻԿ

Յ. ՃԱՆԻԿԻԼԵԱՆ

ՆՈՐ ԲԱՑՈՒԱՆՆ ԵՆԱՎԱՃԱՌԱՍՏ

Թիւ 389 Իսկիէ-պաշի

Կը վաճառուի ծրարտաւ, բոթայի և աղբրագրի ամէն տեսակ բուրբ նաև զանազան տեսակ սիկարներ: Գէ թուականին հրատարակելով Պուրկարիոյ գաճաճանայ Պօլսոյ պատկերազարդ քաղթ-փոթայի, որ այժմ չեն գործածուիր: Նոյնպէս և կը վաճառուի «Շարժում»:

Շարժումը կը ծախուի նաև. նամակասան գիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը:

Նաև Շարժումը կը ծախուի Ա. Զարբանեկանի գրատունը և խմբագրութեան մէջ: